

**Գևորգ Ս. Ստեփանյան, Համազասպ Սրվանձտյանց,  
Եր., «Լուսակն», ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,  
2016, 1088 էջ\*:**

**Բանալի բառեր** – Համազասպ, արխիվային փաստաթղթեր, մենագրություն, հայ-թաթարական ընդհանումներ, Առաջին աշխարհամարտ, Բաքու, երևանի կենտրոնական քանոն:

Վերջին տասնամյակներին հայ ազգային-ազատագրական պայքարի անվանի դեմքերի կյանքին ու գործունեության պատմությանը նվիրված մի շարք մենագրություններ են լույս աշխարհ եկել՝ Անդրանիկ, Նիկոլ Դուման, Գևորգ Չավուշ, Սերաստացի Մուրատ, Դրո, Ա. Մանուկյան, Գ. Նժդեհ և ուրիշներ: Սակայն մինչ օրս բազում այլ նվիրական անուններ իրենց ուսումնասիրողին էին սպասում:

Նրանցից մեկն էլ Համազասպ Սրվանձտյանցն էր, բայց այսօր շնորհիվ պատմաբան Գևորգ Ստեփանյանի պրպտող, համառ ու մանրագնին աշխատանքի՝ ընթերցողի սեղանին է դրվել նաև վանեցի խմբապետի կյանքին ու գործունեությանը նվիրված սովորածավալ (ավելի քան 1000 էջանոց) մի մենագրություն, որը, անկասկած, լրացնում է նաև այդ բացը:

Կարելի է վստահաբար ասել, որ գրախոսվող ծավալուն գիրքը ոչ միայն անզուգական հրամանատարի կյանքի ու գործի իրապատումն է, այլ նաև վերջինիս ապրած ողջ ժամանակահատվածի հայ ազատամարտի, ՀՅԴ գործունեության, իսկ ավելի կոնկրետ՝ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ քաղաքական կյանքի հազեցած պատմությունը: Այլ խոսքով՝ խմբապետ Համազասպի կյանքի ու գործունեության տարեգրությունը ներկայացված է դարաշրջանի հայ հասարակական-քաղաքական կյանքի լայն համայնապատկերի վրա, ինչն ավելի է բարձրացնում աշխատության գիտական արժեքը:

Անցած ժամանակաշրջանում սփյուռքյան մամուլում կամ առանձին հրատարակությունների ձևով լույս տեսած հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերի կյանքին ու գործին նվիրված հուշագրություններում, վավերագիր նյութերի ժողովածուներում ու հոդվածաշարերում գերակշիռ մեծամասնություն են կազմում ՀՅԴ-ին զինվորագրված գործիչների ու հայդուկապետերի մասին հրապարակումները: Եվ դա պատահական չէ, քանզի անհնար է պատկերացնել հատկապես 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների Հայոց պատմությունը առանց ՀՅԴ գործունեության, որով-

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽՈՍՎԱՐ-ՄԱՐԿ, 2017  
ՎԿՆ ԽԱՄԱՆԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

\*Ընդունվել է տպագրության 02.03. 2017:

հետև հիմնականում նա է իր ուսերին կրել հայ ազգային-ազատագրական պայքարի, Հայկական հարցի հետապնդման, ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի, Առաջին հանրապետության կերտման ծանր բեռը: Այս կապակցությամբ տեղին է ճանաչված հասարակական գործիչ Գ. Գյոզալյանի դիտարկումը. «Փորձեք հայոց պատմությունից դուրս ձգել Հ.Յ. Դաշնակցության գործը - այդ պատմությունը կը դառնա անիմաստ, բովանդակությունից զուրկ և արժանի էլ չի լինի պատմություն անունը կրելու»<sup>1</sup>:

Հայոց պատմությունը կերտող պայծառ դեմքերից էր զինվորական գործիչ Համազասպ Սրվանձոյանցը, որը հասկանալի պատճառներով չի գնահատվել ու արժևորվել նաև խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ: Հասկանալի է, որ խորհրդային 70 տարիներին հայ ընթերցողին ըստ էության անհասանելի է եղել Համազասպի և նրա նման տասնյակ ու հարյուրավոր դաշնակցական գործիչների իրական կերպարը: Առավելագույնը նրանք ներկայացվել են աղավաղված ու խեղաթյուրված կերպով, որովհետև ՀՅԴ կուսակցության պատմության նենգափոխումը, նրա գործիչներին «սևացնելն» ու «ժողովրդի թշնամի» դուրս բերելը համարվել է Հայկոմկուսի գաղափարաքաղաքական պայքարի կարևոր առաջադրանքներից մեկը: Համազասպի կյանքի ու գործունեության ամբողջական ուսումնասիրությանը նվիրված մենագրությունը գալիս է հերթական անգամ քողագերծ անելու ՀՅԴ հասցեին ժամանակին կոմունիստների տարածած սուտն ու կեղծիքը:

Անչափ հարուստ է աշխատության աղբյուրագիտական հենքը՝ սկսած Հայաստանի ազգային արխիվի ու Երևանի պատմության պետական թանգարանի վավերագրերից մինչև ՌԴ Մոսկվայի մարզային պատմական արխիվի ֆոտոժապավեն վավերագրերը, ՌԴ պետական արխիվի, Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվի նյութերը, այնուհետև՝ ՀՅԴ Կենտրոնական արխիվի փաստաթղթերն ամփոփող «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար» բարձրարժեք ժողովածուն, ինչպես նաև առանձին հիմնահարցերի գիտական մշակման համար օգտագործված փաստաթղթերի և նյութերի հրապարակումները, հուշագրությունները, մենագրությունները, ժամանակաշրջանի պարբերական մամուլը, հեղինակի կողմից հայտնաբերված և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված բոլորովին նոր նյութերն ու փաստաթղթերը: Գրքի փաստագրական-աղբյուրագիտական հենքը այնքան հարուստ է ու բազմաբովանդակ, որ տեղ-տեղ որևէ էջի տողատակի հղումներն ու մեկնաբանություններն ավելի ընդարձակ են, քան բուն շարադրանքը: Բացի այդ՝ մենագրության հեղինակը իր ձեռքի տակ եղած փաստագրական հարուստ նյութը շարադրել է ոչ թե հերոդոտոսյան մեթոդով (ամեն լսածը կամ կարդացածը գրի առնելով), այլ ցուցաբերել է քննական մոտեցում՝ ձշտելով աղբյուրների ու նյութերի հավաստիության ու վավերականության աստիճանը: Աշխատությունը արարելիս հեղինակը մշտապես գտնվել է փնտրտուքների մեջ, նյութեր է պեղել, հարցազրույցներ է կազմակերպել Համազասպի ազգականների ու նրան ճանաչողների հետ, կատարել ձայնագրություններ, նկարահանումներ և այդ բոլորի արդյունքում ստեղծել է մի հիմնարար մենագրություն, որն իր համապարփակ ընգրկումով բացառիկներից է իր տեսակի մեջ և արժանի է մեծ դրվատանքի, խրախուսանքի ու մրցանակի:

Ինչպես ասվեց, Համազասպի բուն գործունեությունը ուղղակիորեն համ-

<sup>1</sup> Գիւզալեան Գ., Քաղաքական մտքի զարգացումը և Հ.Յ.Դաշնակցությունը, Բարիզ, 1927, էջ 5:

ընկնում է Հայոց պատմության 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների առավել հազեցած պատմափուլերի հետ՝ 1905-1906 թթ., 1914-1916 թթ., 1918 թ., 1919-1920 թթ. և 1921 թ.: Հեղինակը ճիշտ է վարվել, որ Համազասպի գործունեությունը բաժանել է ըստ թվարկված պատմափուլերի, քանզի «որպես գաղափարի զինվոր, Համազասպը Հ Յ Դաշնակցության այն նշանավոր գործիչներից էր, որը մշտապես գտնվում էր իր ժամանակի քաղաքական իրադարձությունների կիզակետում»<sup>2</sup>:

Հաշվի առնելով մենագրության անսովոր մեծ ծավալը՝ նպատակահարմար ենք համարում հանգամանորեն քննել ու արժևորել նրանում լուսաբանված՝ Համազասպի կյանքի ու գործունեության առավել արգասաբեր երեք-չորս պատմափուլերը:

**Առաջին գլխում** պատկերվում է վանեցի Համազասպ Սրվանձոյանցի մանկությունն ու կենսապատումը՝ համեմված Վան-Վասպուրականի կոլորիտային նկարագրություններով: Ներկայացված է հասարակական-քաղաքական այն միջավայրը, որի պայմաններում պետք է ձևավորվեր հայ ազգային-ազատագրական շարժման երևելի գործիչը: «Թուրքական բռնակալության դեմ, - գրում է հեղինակը, - ընդվզման ու բողոքի առաջին ծիլերն են սկսում սաղմնավորվել ապագա ազգային գործիչ մատաղ հոգու մեջ, և նա պատանեկան տարիներից ընտրում է **ապրել և մեռնել հայրենիքի համար** (ընգծումը հեղինակինն է- Ա. Հ.) վեհ ու վսեմ նպատակը: Հարագատ ժողովրդի դարավոր ազատասիրությունից ժառանգած այդ տարերքով էլ Համազասպը զինվորագրվում է ազատագրական շարժմանը»<sup>3</sup>:

Այնուհետև ներկայացվում է Համազասպի կյանքի ու գործունեության 1890-ական թթ. երևանյան շրջանը, ՀՅԴ-ին անդամակցելը և ակտիվ գործունեությունը՝ Երևանից մինչև Թիֆլիս ու Շուշի:

Համազասպ ազատամարտիկի ու հրամանատարի ունակությունները համակողմանիորեն բացահայտվեցին Ռուսական առաջին հեղափոխության շրջանում բռնկված հայ-թաթարական արյունալի ընդհարումների ժամանակ: ՀՅԴ Արցախի Զինվորական խորհրդի անդամ Համազասպին ժողովուրդը կնքեց «Անկերանի հերոս» պատվանունով: Նա, չունենալով զինվորական կրթություն, թրծվեց մարտերում և ի հայտ բերեց հրամանատարի ձիրք, մարտ վարելու՝ ռազմագետի բնատուր ունակություն: Ամենայն մանրամասնությամբ են նկարագրված մարտական գործողությունները և քաղաքական զարգացումներն Արցախում 1905-1906 թվականներին:

Միննույն ժամանակ բացահայտվում են ՀՅԴ կովկասյան մարմինների աշխատանքները, որովհետև հիմնականում նրանք էին կազմակերպում, համակարգում, հրահանգավորում և նյութատեխնիկական միջոցներով (զենք, զինամթերք, դրամ և այլն) օժանդակում ինքնապաշտպանական ուժերը: Ամփոփելով 1905-1906 թթ. կռիվների արդյունքները՝ հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ «շնորհիվ ՀՅԴ կազմակերպած հերոսական դիմադրության արցախահայությունը հերոսական կռիվների բովում տարել է լիակատար հաղթանակ»<sup>4</sup>: Բերվածին կարելի է հավելել, որ այդ կռիվների ու հաղթանակի պատմական ուսանելի փորձը, Համազասպի անուրանալի ծառայությունները հաշվի առնվեցին ու գործադրվեցին նաև մեր ժամանակներում՝ Արցախյան

2 Գևորգ Ս. Ստեփանյան, Համազասպ Սրվանձոյանց, Եր., 2016, էջ 8:

3 Նույն տեղում, էջ 65:

4 Նույն տեղում, էջ 176:

գոյամարտի ընթացքում: Եվ այս առումով կարելի է ասել, որ Համազասպը վիրտուալ դաշտում իր մասնաբաժինն ունի մեր ներկա հաղթանակների գործում:

Մենագրության ոչ պակաս ուշադրության արժանի 4-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում Համազասպի գլխավորած կամավորական 3-րդ ջոկատի մարտական գործողությունների նկարագրությանը: Հայրենասիրական ջերմ շնչով է շարադրված խմբապետ Համազասպի և մյուս խմբերի միավորումով ձևավորված Արարատյան գնդի 1915 թ. գորահանդեսը Էջմիածնի Մայր տաճարի բակում և ապա մարտական գործողությունները Արևմտյան Հայաստանի տարածքում՝ ընդհուպ Վանի ազատագրումը:

Գրքի սույն հատվածի մասին կարելի է ասել, որ Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների, ռազմավարական ու մարտավարական քայլերի, հայ կամավորական խմբերի ու հրամանատարների մասնակցության ներկայացումը այնքան հարուստ է ու ընդգրկուն, ուշագրավ և ուսանելի, որ այս աշխատությունը կարելի է հանձնարարել որպես օժանդակ ձեռնարկ Հայաստանի մերօրյա ռազմական դպրոցների սովորողներին:

Մենագրության հեղինակը ռազմական գործողությունների լայն ֆոնի վրա քննում ու հիմնավորապես բացահայտում է ռուսական բանակի հրամանատարության 1915 թ. հուլիսյան կեղծ նահանջի, արևմտահայության կոտորածի, հարկադրական գաղթի ու Վասպուրականի հայաթափման քաղաքական հանգամանքները: «Այս նահանջը կատարեալ կեղծիք մըն է, դուք կուզեք, որ Հայաստանը առանց հայու մնա»<sup>5</sup>: Սրանք Անդրանիկի կշտամբիչ խոսքերն են՝ ուղղված ռուսական զորքերի հրամանատար գեներալ Ի. Տրուխինին:

Շատ ավելի մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում պատմագիտության մեջ հակասական գնահատականների արժանացած Բաքվի 1918 թ. պաշտպանությանը նվիրված բաժինը: Պատմաքաղաքական իրադարձությունների լայն համայնապատկերի վրա հեղինակը հիմնավոր փաստերով բացահայտել է խորհրդային գրականության մեջ տարածված, ներկայումս էլ տեղ-տեղ արձագանքվող (Վլ. Պետրոսյան և ուրիշներ) միտումնավոր կեղծիքը Բաքվի 1918 թ. ճակատագրական իրադարձություններում Համազասպի գլխավորած 3-րդ բրիգադի իբր բացասական դերակատարության վերաբերյալ: Գ. Ստեփանյանը պարզել է, որ այդ կեղծիքի սկզբնաղբյուրը եղել է ոչ ավելի ոչ պակաս՝ Համազասպի դեկավարած բրիգադի կոմիսար, բոլշևիկ, հետագայում խորհրդային կուսակցական-պետական անվանի գործիչ Անաստաս Միկոյանի՝ Ստ. Շահումյանին ուղարկած հեռագրերից մեկը, որում Բաքվի զորքի հուլիսյան նահաջը անհիմն կերպով համարվել է Համազասպի «դավաճանության» հետևանք<sup>6</sup>: Գրքում հիմնավոր փաստերով ցույց է տրված, որ բոլշևիկների և ՀՅ Դաշնակցության ուժերը համագործակցել են իրար հետ՝ թուրքերի մահաբեր ներխուժումը կասեցնելու և Բաքվի հայությանը կոտորածներից փրկելու համար:

Հեղինակը անդրադարձել և քողազերծ է արել Բաքվի կոմունսայի ու ՀՅԴ համագործակցության և Համազասպի դերակատարության վերաբերյալ թուրքադրբեջանական հին և ժամանակակից կեղծարարությունները՝ ցույց տալով

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 360:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 39 և 538-539:

դրանց համահունչ լինելը խորհրդահայ պատմաբանների և Ա. Միկոյանի տեսակետներին:

Հակառակ ժամանակակից ադրբեջանցի հեղինակների մեղադրանքներին՝ Գ. Ստեփանյանը փաստական հարուստ նյութերով հիմնավորում է, որ Մուսավաթի և Բաքվի խորհրդային իշխանության միջև 1918 թ. մարտյան եռօրյա կռիվները ազգային բնույթ չեն ունեցել: Հայերը՝ հանձինս Բաքվի Հայոց ազգային խորհրդի և ՀՅԴ Բաքվի Ոսկանապատի ԿԿ-ի, պահպանել են չեզոքություն, ապահովել են կարգուկանոնը՝ խուսափելու համար ավելորդ արյունահեղությունից: Համազասպի և Վարդանի ղեկավարած ինքնապաշտպանական խմբերը ճակատ են հարդարել Մուսավաթի դեմ միայն այն բանից հետո, երբ վերջինս սկսել է հայերի կոտորածը: Բայց չնայած ձեռք բերված հաղթանակին՝ նրանք ապահովել են քաղաքի խաղաղ թաթար բնակչության անվտանգությունը: Արդյունքում հաջողվել է փրկել ավելի քան 14 հազար թաթարի կյանք<sup>7</sup>:

Միանգամայն այլ իրավիճակ ստեղծվեց այն բանից հետո, երբ հետագայում Մեծ Թուրան ստեղծելու պլանով Անդրկովկաս ներխուժեց Օսմանյան բանակը՝ Բաքուն գրավելու, Անդրկասպյան մուսուլմանական երկրներ հասնելու երիտթուրքերի երազանքն իրագործելու համար: Թուրքական մահաբեր վտանգից պաշտպանվելու նպատակով Բաքվի հայկական ազգային գինուժը քաղաքի և իրենց անվտանգությունը ապահովելու համար թև-թևի համագործակցել է Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի հետ<sup>8</sup>, մի հանգամանք, որը ժամանակին ուրացվել է խորհրդահայ պատմագիրների կողմից: Մի կողմ դնելով պատմության հանրահայտ փաստերը՝ նրանք ջանացել են առհասարակ ժխտել մարտավարական նկատառումներով ձևավորված ՀՅԴ - բոլշևիկներ գործակցության իրողությունը:

Բաքվի նահանգում 1918 թ. տեղի ունեցած իրադարձությունների քննության ընթացքում Գևորգ Ստեփանյանի կողմից քողազերծ են արվել թուրքադրբեջանական բազում այլ կեղծիքներ, ինչպես, օրինակ՝ Ղուբայի հայության և հրեաների հանդեպ մուսավաթականների ոճրագործությունները<sup>9</sup>: Որովհետև արդի Ադրբեջանում պետական քաղաքականության մակարդակով գլխավայր շուռ տալով փաստերը, կովկասյան լեռնականների, մուսավաթականների և այլ ավազակախմբերի Ղուբայի վրա իրականացրած հրոսակային հարձակումները (ջարդերն ու կողոպուտը) այսօր միտումնավոր կերպով վերագրում են հայերին՝ որպես զոհ ներկայացնելով քաղաքի թաթար և անգամ հրեա բնակչությունը<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է Կարմիր բանակի՝ Գյոքչայի մոտ թուրքերից կրած պարտության ու նահանջի հանգամանքներին, որոնք, ինչպես արդեն ասվեց, երկար տարիներ անհիմն կերպով վերագրվել են Համազասպին, հեղինակը 15 էջ է հատկացրել այդ «դավաճանական» նահանջի մանրակրկիտ քննությանը: Այս խնդրի վերաբերյալ ժամանակին մեկնաբանություններ ու գնահատականներ են տվել Ստ. Շահումյանը, Հ. Ավալյանը, Սեպուհը: Հարցը հետագայում քննվել է անգամ ՀՅԴ Գերագույն դատական ատյանում (Նախ. Հովսեփ Տեր-Դավթյան), և չի հիմնավորվել, առավել ևս չի ապացուցվել որևէ ամբաստանություն Համա-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 431-433:  
8 Տե՛ս նույն տեղում, էջ 508-509:  
9 Տե՛ս նույն տեղում, էջ 473-489:  
10 Տե՛ս նույն տեղում, էջ 490-493:

գասպի հասցեին: Նահանջը բացատրվել է ճակատում ստեղծված ընդհանուր ծանր իրավիճակով, թևերի ոչ համագործակցված գործողություններով, ռազմամթերքի ու պարենի վատ մատակարարմամբ, երկաթուղու կտրվածությամբ, շոգով, հիվանդություններով և այլն<sup>11</sup>: Ի դեպ, հենվելով փաստագրական և հուշագրական հարուստ նյութերի վրա՝ հեղինակը այնպիսի հավաստիությամբ է նկարագրում 1918 թ. ամռան-աշնան ռազմական գործողությունները, մարտական դիրքերը, միմյանց հաջորդող գրավված ու հանձնված բնակավայրերը, ամրությունները, որ ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե նա անձամբ գտնվել է այդ վայրերում և մեկ առ մեկ գրի է առել իր տեսածը:

Բաքվի 1918 թ. ամռան-աշնան հերոսական ու միևնույն ժամանակ ողբերգական կոիվների ընթացքում հայկական ուժերի դրսևորած մեծ համառությունը հեղինակը իրավացիորեն կապում է Հայաստանի նորահռչակ հանրապետության անվտանգության ապահովման խնդրի հետ: Պաշտպանել Բաքուն՝ իր վրա հրավիրելով թուրքական հիմնական խմբավորման հարձակումը, կնշանակել մեղմել Երևանին սպառնացող վտանգը, պաշտպանել Հայաստանի հանրապետության և Արարատյան հայության ֆիզիկական գոյությունը: Պատահական չէ, որ երիտթուրք պարագլուխները բացեիքաց հայտարարում էին, թե «Հայաստանի խնդրի վերջնական լուծումը կախուած է Բագուից, երբ կը գրաւենք Բագուն, կը լուծենք և Հայաստանի հարցը»<sup>12</sup>: Այլ խոսքով՝ Բաքվի պաշտպանության երկարածգումը ողջ արևելահայության համար ունեցել է ռազմավարական նշանակություն, և այդ գործում Ռոստոմի, Ա. Գյուլխան-դանյանի և մյուսների կողքին իր անուրանալի մասնակցությունն է բերել Համազասպը:

Հայաստանի ու հայության համար փրկարար նշանակություն ունեցավ այն իրողությունը, որ մինչ թուրքերը սեպտեմբերի կեսին, այնուամենայնիվ, մեծ դժվարությամբ գրավեցին Բաքուն, և տեղում կատարվեց շուրջ 30 հազար հայության սպանող, Պաղեստինյան ճակատում օսմանյան Թուրքիայի ջախջախիչ պարտությունից և դրան հետևած՝ Մուդրոսի գինադադարից արդեն հաշված օրեր էին մնացել: Այդպիսով կանխվում էր երիտթուրքերի դիվային ծրագրի երկրորդ մասը՝ Արևելյան Հայաստանի մի մասում կուտակված հայության ցեղասպանությունը:

Շարադրանքի հաջորդ գլուխներում հեղինակը ներկայացնում է Հայաստանի հանրապետության բանակի ամրապնդման գործում Համազասպի ունեցած ներդրումը և ապա անցնում է Հայաստանի խորհրդայնացման շրջանի իրադարձությունների ներկայացմանը:

ՀՀ անկումից հետո բոլշևիկների սանձարձակ բռնությունների գոհ է դառնում նաև Համազասպը: Նա միամտություն էր ունեցել չեռանալ Հայաստանից: Ստահակ ռազմժողկոմ Ավիսի խորհրդով 1920 թ. դեկտեմբերի 11-ին Նոր Բայազետից նա գալիս է Երևան և հայտնվում չեկայի, իսկ հետո՝ Կենտրոնական բանտում: Գրքում մանրամասնորեն նկարագրված է Համազասպին և նրա բանտարկյալ ընկերներին բաժին ընկած գողգոթան: Համազասպին մեղադրում են Բաքվի դեպքերի և անգամ Շահումյանի սպանության մեջ<sup>13</sup>: Հանգամանալից վերլուծությամբ ցույց է տրված նաև Փետրվարյան ապստամբության նախօրյակը և Համազասպի կյանքի վերջին օրերի ողբերգությունը:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 538-554:

12 Նույն տեղում, էջ 503:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 738:

Անհնար է խոսել 1921 թ. Փետրվարյան ժողովրդական ապստամբության մասին և առաջիններից մեկը չհիշատակել ստոր խաբեությանը բանտարկված և ապա ապստամբության լուսաբացին թուրք դասաբի ձեռքով կացնահարված Համազասպին: Ուշագրավ է, որ բանտում եղած ժամանակ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը և չեկիստ Գ. Աթաբեկյանը Համազասպին հավաքագրելու փորձ են արել, ինչը կտրականապես մերժել է հավատավոր դաշնակցականը<sup>14</sup>:

Մեր պատկերացմամբ՝ Համազասպին կարելի է համարել 1921 թ. Փետրվարյան ապստամբության խորհրդանիշ: Նրա ողբերգական մահը հայրենիքին, սեփական ժողովրդին և իր հարազատ կուսակցությանը կյանքի գնով ծառայելու հետևանքն էր:

Համազասպի կյանքի վերջին ժամերի և դրան հետևած ապստամբների կողմից Երևանի ազատագրման մանրամասների նկարագրությունից հետո էլ Գ. Ստեփանյանը խնդիրը չի փակում, այլ թեման շարունակում է մինչև իր հերոսի պայքարի ու գործի հաղթանակի հանգրվանը: Հայտնի է, որ շատ կարճ՝ ընդամենը 43 օր տևեց Փետրվարյան ապստամբության տված ազատությունը, սակայն Համազասպի և մյուս քաջորդիների ցանած սերմերը ծլարձակեցին դրանից ուղիղ 70 տարի անց՝ հանձին մեր օրերում իր կայացման դժվարին ուղին հարթող Հայաստանի երրորդ հանրապետության:

Գևորգ Ստեփանյանը ստեղծել է պատմագիտական բարձրարժեք մի գործ, որը կարելի է անվանել **համազասպապատում**, ինչը մասն է մեր ընդհանուր հայրենապատման: Աշխատությունը գրված է մաքուր հայերենով, սահուն լեզվով, հայրենասիրական ջերմ շնչով, տեղ-տեղ էլ գեղարվեստական զեղումներով՝ քառյակներով, լուսանկարներով և այլն: Հեղինակն իր առջև դրված խնդիրը լուծել է կատարելապես, իր կողմից բարձրացված բոլոր հարցերին տվել է սպառիչ պատասխաններ: Ուստի Անդրանիկի, Նիկոլ Գումանի, Գևորգ Չավուշի, Գարեգին Նժդեհի և այլ նվիրական դեմքերի մասին գրված աշխատությունների կողքին իր արժանի տեղն է գրավել Համազասպի կյանքն ու գործունեությունը ներկայացնող Գևորգ Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունը:

Ա. Հ.

**A. H. – Gevorg S. Stepanyan. Hamazasp Srvandztyants. Yer., «Lusakn», NAS RA, Institute of History, 2016, 1088 p.**

**Key words** – Hamazasp, archival documents, monograph, Armenian–Tatar collisions, World War I, Baku, Central prison of Yerevan.

**A. A. – Геворг С. Степанян. Амазасп Сrvандзтянц. Ер., “Лусакн”, НАН РА, Институт истории, 2016, 1088 с.**

**Ключевые слова** – Амазасп, архивные документы, монография, армяно–татарские столкновения, Первая мировая война, Баку, центральная тюрьма Еревана.

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 784: